




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

Искусство

801.99
9-39

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ.

ԿՐԻՄ ՍՈՒՅՈՒՆ



ՄԱՐՔՈՎ

Ս. Ս. Ս.

153

Բաշ

15 NOV 2011

891.99
2-39 48



1

Հ Ր Ա Ն Ո Ւ Շ Ը

1.

Հուզվել եր անողոր ժողովը:
ձգձգվում եր:
Նման եր ակեկոծ ծովի:
Հուրհուրան Հրանուշն եր նախազանում
ժողովին:

2.

Հրանուշը:
Սոսմում, թե քաղվում ե կարծես,
սպառվում արագ, անապատ:
զուխը «հարց»երով բարձել՝
բռնում ե բարձր:

Մի փառով յենթաշեփ գյուղ:
Մի փառով Կինբաժին, Սկումբ:
Գիշերով մենակ, աներկյուղ:
Պարապմունք կարմիր Բանակում:

Սիրում են կրտսնարմեյցները
ժամերով նրան աղանջել:
կարկաշում են քաղցր ժամերը
նրանց աղանջին:

Հրաշալի կինուկենթի պես
անընդհատ սրտածում ե նա—

153

9861
1991
1986

անցյալը մեր բանտի մեջ:
Ներկան: Գյուղը: Գալիքը: Կամսանան:

— Մեր գյուղը դեռ ողի խմող,
աղբի մեջ բնող, հետամնաց,
կրանարմեյց, գինվիր ուսումով,
վոր այդ նոր ֆրոնդը գնաց:

Լսում են կրանարմեյցները
ժամերով իրանց «կրակ»-ին,
հյուսելով սրտերից ներս
աշխատանքի բյուր ծրագիր...

Թեկուզ աչքերը հարազատ
ինքնիրենց խոստանան քեզ սեր,
թեկուզ աչքերը սրասայր
Սըրի պես սիրարդ կիսեն.—

Ո՛վ կարա «ծուռ» միտք անի.
«այդ կողմից պինդ ե», գիտեն:
Այդ նա յեր Բսան թվականին
բանդապետին բանդում ապստակեց:

3.

Կրանարմեյց Համոն այն որը
հիշում է այսօրվա պես վառ.
Հրանուշը հուրհուր ձայնով եր...
ու կյանքը յերկուսի կիսված:

Հիշում ե.—

աշուն եր:—Նոյեմբերը:

Համոն հերթապահ եր բանդի:
Բերում են, բերում խմբերը—
«բայլահիկ-բունդիստ»...

Հիշում ե:—

Հրանուշին ել բերին:

Նայում եր անտիկ հպարտ.

վոնց արծիվ բռնեա ամպերից

ու բերեա բանդ:

Գինեխառն աչք ու յերախ՝

բանդապետը նայեց Հրանուշին

ու սրտում յելավ յեռաց

ցանկու թյունը շիլ:

Գիշեր:

Լուռ:

Համոն է կանգնել:

Կամերում Հրանուշը մենակ է:

Բանդապետն զգուշ մտավ ներս.

— «Բնեկո՛ւ»:

Ի՞նչ:

Գիշեր ժամանակ ել...

Սուսու:—

Լսիր:—

Ներսում փոփսում են.

— Դուք մրսում եք, Գրիորդ:

Իմ սենյակըս տաք ու մաքուր ե...

Մարդ չկա...

Բոլորը քնել են...

Ասացեք միայն «այո»

ու մեկ ել՝ ձերոնք—

բայլահիկները—

ասացեք՝ քանի՞ մարդ,

սվքեր է մեր են...

«Մի՞թե կը մատնի»...

Ու Համոն գաղտնի

տեսնում ու լսում էր.

սկսում էր սիրտը սրժարժալ,

բայց տես. —

դողում է Հրանուշը կապտած.

— Վոչ!

ու — շրափ!!! — ճայթեց

Բանդապետի դեմքին մի ապտակ: —

— Սրիկա!?

Ամոթից, հերսից կարմրած

բանդապետն ուզում էր բռնանա,

բայց հանկարծ միջուկ կամերան

վորոտաց «Ինտերնացիոնալ».

.

Նայում էր Համոն Հրանուշին.

մտքում հիանում էր. —

«կեցցես»!

հենց այդ որ Համոն վորոշեց

— Յես միանում եմ ձեզ:

Հիշում է Համոն կրանարմեյց

այդ որը այսորվա պես վառ.

Հրանուշի ապտակը կարմիր

«նրանց» սև ճակատին տպված:

4.

Ու հիմա

հուզվել էր ժողովը:

Զգճգվում էր:

Նման էր ալեկոծ ծովի:

Հրատապ Հրանուշն էր նախազանում —

ժողովին:

Նավի պես ծանր որակարգը

լողում էր ծեծվող կողերով.

այժմեյական այլոց որակարգը. —

«Աշխատանքն ընդշեփ գյուղերում»:

— Մենք պետք է զգույշ մոտենանք

դարերով հիասթափված գյուղին:

Առեն մի սխալը մեր մի դանակ է

կուլակի ձեռքերում դեղին:

Յերկու խամ կոմյերիտ կրակ

դնացել են ժամ թեանցուկ,

ծաղրել են Զատիկ, Պատարագ:

Ու գյուղից քաղաք իրարանցում:

Քննում ենք ահա այդ գործը:

— վոնդել շարքերից!

— Վոչ!

յերիտասարդ են դեռ,

դեռ անփորձ են: —

Ու ձայն են պահանջում մատները ամբոջ:

Ախ — այս Արուսը, կարոն ու Սերդոն,

վիճում են անդիշում, չար.

ուզում ես սեղանն ապտակիր ձեռքով,

ուզում ես ջղային ճշտ:

Ու վոնց ել չի խնայում
 Հրանուշն իրան, իր անձին:
 Կարծես թե սրտի կաթնայում
 յետում ե արյան տեղ բենդին:

— Ախ, Հրանուշ, Հրանուշ, տաքարյուն,
 փափսում ենք սիրով, յերկյուղով.
 հրատապ կյանքիցդ մի գարուն
 խլում ե ամեն մի ժողովր:

5.

Ես նոր պատերազմին
 դու նոր թնդանոթ.
 դու, հուրհուրան ոտովի,
 կարմիր Հրանուշ:

Աչքերդ սուր, հզոր
 ձագեր արծվի,
 հոնքերդ սրասայր
 յերկու սև սվին.—

Կարող ես — իհարկե—
 զարկես հազար սիրտ,
 թե ուզես ուղարկես
 աչքերդ վորսի:

Բայց դու քեզ գյուղերին
 ծիծեռնակ շինել,
 «մեղհանական սերի
 ժամանակ չունես»:

Ու մենք սիրում ենք հենց
 այդ կնճիռը խիտ,

վոր դու կիտում ես կես
 հոնքերդ զլիսին:

Այն լրջությունդ
 կուռ,

յետանդդ առույգ.

այն,

վոր ժողոված բռնեցքումդ —
 ժողով ես վարում.—

այդ ե նորն

ու հզորը


այդ ե թանկ

անուշ,

վոր սիրում ենք այստ
 մենք—

Հրանուշ!!!

1925 թ. Ապրիլ Յերեվան



[Handwritten signature]

Հասարակություն

~~Իրավունքներ և պարտականություններ~~

ՀՀ Ազգային գրադարան



NL0335434

29404